իւր զօրօք և լէհու զօրն իբրու 30000 բնաւն քաչապէս պատերազմեալք յաղթեր են զթշնամին. նաև զկարմունջս նոցին կտրեալ, նաև մեր զօրացն 600 վիրաւորք ևս զոն։ (Հ. Միք. Սեր. առ Մխիթար, յամին 1738 յուլիսի 12. [պեղկրատ])։

ՃԶ.

Ի կողմանէ պատերազմին, մինչև ցայս ժամ մեծ և երևելի բան մի ոչ արտակայացաւ. թէպէտ յառաջ գրեցի զկոտորմանէ տաճկաց յիսուն հազար. և սոցա 16 հազար ոչ էել այնպէս. այլ յոյժ սակաւ յերկուց կողմանց, բայց տաճիկ[ք]ն փախեան թողլով զախս իւրեա[ն]ց։ Ցետ քանի մի աւուր միացեալ և բազմացեալ վերստին եկեալ են տաճիկքն և դիպեալ են պատերազմաւ. անկեալ են վեց հազարի չափ. զ24 դրօշակ և զերկու տաւուլ, կալեալ ևս սոքա ի տաճկաց, յետս քարշեալ տաճիկք և սոքա ևս յայլ կողմ, մերձ զուչօվայու. ասեն թէ ՃՌ են տաճիկ։ Զօրք քրիստոնէից երկու ամիս, որ այն կողմն են, զթուրքն յիւրեանց հողէն ոչ կարացին հանել տակաւին...։ Աստ երկու անգամ տօնանմայ արարին. առաջինն մեծ յառաջ քան զկէս օրն հանդիսական հաւաքումն ի յաթոռական եկեղեցին, ձայնաւոր պատարագ, թէ տէում[1]։ Ի կէս աւուրն ՃԷՆրալն քաղաքիս զմեծ սեղան զօրագլխաց արար. ի գաւիթ պալատին իւրոյ մինչև ՃԼ. թօփ արձակեցան։ Ցերեկոյին ի 24, ի նաւուց, ի բերբէն 250 թօփ արձակեցան և ի զինուորաց երեք հազար թէֆէնկ, այս ամենայն երեք անգամով։ Երկրորդում աւուր մեք ևս զձայնաւոր պատարագ և զքեզ աստուած զովաբանեմք ասացաք։ Այս եղև յուլիսի 15. 9 դպիր էին, տաճկին, որ սոյն յաղթութիւնս արեր էին[?]։ 15. մէկ անգամ ևս դպեր են տաճկին. վերստին յաղթեալ նոցա, որոյ վասն աստ ի 21 յուլիսի վերստին յերեկոյին թօփով շէնլիկ արարին։... Նաև ի դմշվար և իւր նահանգ մահ զոյ. անտի երթևեկութիւն ոչ լինի ուրեք։ Մերայնոց բնաւից ողջոյն։ (Հ. Միք. Սեբաստացի առ Մխիթար, յամին 1738 յուլիսի 26, ի պեղրղատ)։

ՃԼ.

Ի քաղաքիս այսմիկ այնքան չփոթ ահ և երկիւղ զոյ ի տաճկէ, բազումք փախստեայք լինին, նաև հայոց մնացորդն, բաց ի պարոն ՃանազիզԷ, և յայլոց միաքատաց ի հայս սերընդէ։ Սոցա մեծ զօրաց մասն էանց գնաց ի վեր, մասն աստ տիւ և գիշեր զպարիսպն պահպանեն։ Տաճիկն մերթ երևի և մերթ անյայտ լինի. տաճիկն մինչև ի պէլրղատ տիրեալ զամենայն տեղիս։ Շուրջ զեկեղեցեաւ մերով է գոմ արջառոց սայլից և արապաճոց. զգերեզմանատունս մեր նաև զպարտէզ յափշտակեալ, գմեռեալս իւրեանց թաղեն, զպտուղն և զբոյս պարտիզին յափշտակեցին, նաև զբնակութիւն մեր։ (Հ. Միք. վ. առ Մխիթար, յամին 1738 սեպտ.ի 20, ի պեղրղատ)։

ՃԼ.

Այս ամ ձմեռն կանուխ սկսաւ 12 նոյեմբերէս, սկսաւ երկիրն և ջրերն սառիլ, և ի 20էն սկսաւ ձիւնել տիւ և գիշեր մինչև ցայսօր։ Աղէտն և կասկածն քաղաքիս վասն մահուան անպատմելի է, բազումք և բազումք յամենայնում աւուր մեռանին, չանտամահիւ մեռանողք ի գողակախաց ի սևագոյն սայլս եղեալ տանի յարտաքս ձգէ. ի վերայ որոյ զկարծիս ունին և տեսանեն, կենդանւոյն դնեն ի նոյն սայլ, յայնկոյս թանայու ձգեն, թէ և չէր մեռանելոց, անդէն մեռանի, յաղագս անդարմանութեան։ Բազումք աղէտք են, զորոց չէ ժամանակ պատմելոյ. մեք ևս ի յահ մեծ եմ, պարոն ՃանազիզՆ ի չաբաթ երեք ծոլ[մ] և պահս պահէ յաղագս այսր իրի, և ճաշ բանտարգելեցելոց արար, և ողորմութիւն բաշխ[ե]աց, նմանապէս և այլք հայք առնելոց են, որք ունին զկարողութիւն։ (Հ. Միք. վ. Սեբաստացի առ Մխիթար, յամին 1738 նոյեմբ.ի 22. ի պեղրղատու)։

---

1. Լատինաց «Զքեզ Աստուած զովաբանեմք» երգը։